ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Հ Ր Ա Մ Ա Ն

«25» հոկտեմբեր 2025 թ. N 120-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 2-Ի N 264-Ա/5 ԵՎ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 26-Ի N 731-Ա/5 ՀՐԱՄԱՆՆԵՐՆ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 63-րդ հոդվածի 2-րդ մասով և 5-րդ մասի 1-ին պարբերությամբ, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի լիցենզավորող հանձնաժողովի 2025 թվականի հուլիսի 7-ի նիստի N 27 արձանագրությունը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Անվավեր ճանաչել Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2025 թվականի փետրվարի 2-ի «Քաղաքաշինության բնագավառում լիցենզիայի և ներդիրի տրամադրման մասին» N 264-Ա/5 և 2025 թվականի մարտի 26-ի «Քաղաքաշինության բնագավառում լիցենզիայի նոր ներդիրի տրամադրման մասին» N 731-Ա/5 հրամանները:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի լիցենզավորման վարչության պետ Նշան Մարտիրոսյանին՝ ՀՀ լիցենզիաների միասնական էլեկտրոնային գրանցամատյանում կատարել համապատասխան փոփոխություն:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում այն ընդունելու մասին «ԻՄՊԵՔՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանն իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

4. Սույն հրամանը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 70-րդ հոդվածով սահմանված կարգով:

7/25/2025

X

Signed by: VARDANYAN YEGHIAZAR 2614790133

Ե. ՎԱՐԴԱՆՅԱՆ